

10668

Պ. ՎԵՐՇԿՈՎ

ԿՈՄՅԵՐԻՏՍԻՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՎԱԼՈՒՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐՇԱՎԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ЗКСМ5

4-53

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

„ԱՍՏԼԳԵԶՐԳԸ ԿՈՄՈՒՆԻՍՏԻ“

ԹԻՖԼԻՍ 1931 թ.

09 AUG 2013

10668

3 KOMS

4-53

Պ. ՎԵՐԵԿՈՎ

24 SEP 2006

09 DEC 2009

329.150.4



ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՎԱԼՈՒՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐՇԱՎԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
«ԵՐԱՆԳՈՐԴԻ ԿՈՄԻՆԻՍՏԻ»
ԹԻՖԼԻՍ 1931 թ.

Թիֆլիս, տպարան լրագրների
հրատարակչության «Կոլեկտիվ»
Գլավլիտ № 1007. Տիրաժ № 3000.
Պատվեր № 1391



42774.63

ԼԿՅԵՄ ԾԱՎԱԼՈՒՆ ՍՈՑԻԱԼԻՍ- ՏԱԿԱՆ ԱՐՇԱՎԻ ԾՐՋԱՆՈՒՄ *)

*) Զեկուցում ՀամԼԿՅԵՄ իննբերորդ համագումարի հանրագումարի մասին Կոմյերիտիության Բազմի կազմակերպության ակտիվում 1931 թ. փետրվարի 4-ին:

— Ընկերներ, յեթե մեր միության 8-րդ համագումարը հավաքվել էր, յերբ յերկիրը վերաշինման շրջանից անցնում էր վերակառուցման ժամանակաշրջանին, ՀԼԿՅՄ IX համագումարը հավաքվեց այն ժամանակ, յերբ մեր յերկիրը թևակոխեց սոցիալիզմի ժամանակաշրջանը: Կոմյերիտմիության 8-րդ համագումարը իր վորոշումներով վորոշեց միության ընդհանուր խնդիրները վերակառուցման ժամանակաշրջանում: 9-րդ համագումարը նախագծեց ՀԼԿՅՄ աշխատանքների ծավալուն մարտական ծրագիրը սոցիալիզմի ժամանակաշրջանում:

Ընկ. Ստալինը մեր կուսակցության 16-րդ համագումարում ասել է.

— «Մեզ մոտ Խ. Ս. Հ. Մ.-ում կա սոցիալիստական շինարարության աճող վերելք և՛ արդյունաբերության և՛ գյուղատնտեսության մեջ:

Այնտեղ՝ կապիտալիստների մոտ կա տնտեսության աճող ճգնաժամ և՛ արդյունաբերության և՛ գյուղատնտեսության մեջ»:

Ընկ. Ստալինն ընդգծեց, վոր այժմյան ճգնաժամը պատերազմից հետո առաջին համաշխարհային տնտեսական ճգնաժամն է:

Ի՞նչ է կատարվել կապիտալիստական յերկրների տնտեսության մեջ 1930 թ. 9 ամսվա ընթացքում: Չուղղունի համաշխարհային արտադրանքը, առանց

Խ.Ս.Հ.Մ.-ի, իջել է 16, 1⁰/₀-ով, Հ.Ա. Միացյալ Նահանգներում՝ 21,4 տոկ, Գերմանիայում՝ 22,6⁰/₀-ով: Պողպատի համաշխարհային արտադրանքը իջել է 19,3⁰/₀-ով, քարածխի ստացումը՝ 8,1⁰/₀: ՀԱՄՆ մեքենաշինարական արդյունաբերությունը կրճատվել է 24⁰/₀: Ավտոմոբիլների արտադրությունը ՀԱՄՆ-ում իջել է 36,9⁰/₀, Գերմանիայում 30,8⁰/₀:

Ամերիկական «Մեքենաշինարարությունը» նորություններ ժուրնալում գրում են հետևյալը. «Հարկավոր է արդյոք ժամանակավորապես վերադառնալ մեքենաները, վորովհետև մեզ մոտ գործազուրկներ շատ կան: Սա այժմ այրող հարց է քաղաքային խնդիրներից շատերի համար: Նրանցից շատերը արդեն պատասխանել են հոգուտ ձեռքով աշխատանքի»: Յեւ պետք է ասել, վոր ՀԱՄՆ առանձին տեղերում արդեն կիրառվում է ձեռքով աշխատանքը, գլխավորապես քաղաքային շինարարության մեջ:

ՀԼԿՅԵՄ 9-րդ համագումարում իր գեկուցման մեջ բնկ. Կազանովիչը քաղվածք էր բերել մի ժուրնալից, վորտեղ այդ առթիվ գրված է բառացի հետևյալը. «Ձե՛ն՝ վոր կարելի էր գործ տալ միլիոնավոր մարդկանց յեթե նոր դադարահանների փոխարեն ոգտագործենք հները, հանենք գործից բարձրացնող կրանները և տրանսպորտի մյուս մեխանիզմները, դուրս անենք մեքենագրուհիներին և բոլոր նամակները ըսկանք գրել ձեռքով... այս վոչ վոք չի առաջարկում: Իսկ ինչո՞ւ զո՞հ է դարձել շինարարությունը»: «Յեթե կարելի յե — հեգնում է ժուրնալը, — վերադառնալ ձյուն վաքող մեքենաները, վորոնք արագությամբ վերականգնում են քաղաքի շարժումը, ել՝ ավելի լավ է ձյուն մաքրող մարդկանց ղինել վոչ թե թիյերով, այլ թեյի գդալներով»:

Այս փաստերը մեծ ուշադրության արժանի յեն: Մեզ մոտ խորհրդային յերկրում ուժեղ էերպով մըտցվում է նոր տեխնիկա, նրանց մոտ կապիտալիստական յերկրներում բանն այնտեղ է հասել, վոր նրանք ոտեղծված դրությունից դուրս գալու համար յեղք են փնտրում տեխնիկական հետամնացության մեջ: Մենք մի բան ենք ցանկանում, վոր ամերիկական պրոլետարիատը հեղափոխության միջոցով վորքան կարելի յե շուտ իր ձեռքն առնի իշխանությունը և ամերիկական բուրժուազիային «ազատի» հոգսերից: Ամերիկական մամուլը հաղորդում է, վոր մի շարք տեղերում Ֆերմերները սովի են մատնված: Որինակ՝ Արկանզասի նահանգի 7 քաղաքներում 500 սոված Ֆերմերներ սպառնացել են ավերել մթերախանութները:

Այս բոլորը մի անգամ ևս պարզ և համոզիչ կերպով հաստատում է այն անալիզի ճշտությունը, վոր տվել է կուսակցության 16-րդ համագումարը կապիտալիստական յերկրների ճգնաժամի մասին: Այս բոլորը միանգամ ևս ցույց է տալիս կազմակերպված կապիտալիզմի թեորիաների ամբողջ ոպորտունիստականությունը:

Իսկ ի՞նչ դրություն է մեզ մոտ՝ արդյունաբերության մեջ: 1929—30 թ. ընդհանուր արտադրանքի աճն արտահայտվեց 25⁰/₀-ով, գերազանցելով հնգամյակի 2-րդ տարվա առաջադրությունը 5⁰/₀-ով: Մեր արդյունաբերությունը յերկու տարում տվեց 30.5 միլիարդ ուրբ. արտադրանք, պլանով նախագծված 29,3 միլիարդի փոխարեն: Ամբողջ գործարանային արդյունաբերության 1929—30 թ. տարեկան արտադրության ծավալը ավելի քան յերկու անգամ գերազանցեց նախապատերազմական տարեկամ արտադրությանը:

Նավթային հնգամյակը կատարվում է $2\frac{1}{2}$ տարում: 1931 թ. պլանով պետք է ստացվի 82,5 միլ. քարածուխ, հնգամյակի վերջում նախագծված 75 միլ. փոխարեն: 1931 թ. մեր գործարանները պետք է տան 54 հազ. տրակտոր, հնգամյակի վերջում նախագծված 53 հազ. փոխարեն: 1931 թ. պլանների կատարումը ծանր արդյունաբերության մեջ կնշանակի հնգամյակ կատարում 98%-ով հենց այդ բնագավառում, իսկ ամբողջ արդյունաբերության մեջ՝ 79%-ով: 1931 թ. պլանի կատարումը կդնի մեզ աշխարհում 4-րդ տեղը ըստ չուգունի և քարածխի և 2-րդ տեղը՝ ըստ նավթի: 1931 թ. արդյունաբերության հանրայնացված հատվածը կազմելու յե 97,5 տոկ: Նույն 1931 թ. հրահամյակի 3-րդ և վճռական տարում կսկսեն աշխատել 518 նոր ձեռնարկություններ: Սա մի անգամ ևս ամբողջ պարզության և համոզեցուցիչ կերպով հաստատում է կուսակցության 16-րդ համագումարի յեզրակացությունը, թե «ով-ում» հարցը վերջնականապես և անվերադարձ կերպով լուծված է արդյունաբերության մեջ:

Ինչպես է դրությունը գյուղատնտեսության բնագավառում: 1931 թ. գյուղացիական տնտեսությունների մոտ կեսը ընդգրկված կլինի կոլեկտիվացումով: Թե ինչպիսի արագություն էնք առաջ շարժվում գյուղատնտեսության սոցիալիստական վերակազմության բնագավառում, ցույց է տալիս հետևյալ փաստը. ամենադժվար տարում հավաքվել է 700 միլիոն փութ հաց, իսկ այս տարի սովխոզների և կոլխոզների միջոցով հավաքվել է 1.263 միլիոն հաց: 1931 թ. Խորհրդային Միության 4 խոշորագույն մարզերն, ինչպես օրինակ՝ Հյուսիսային Կովկասը և

մյուսները համատարած կերպով կոլեկտիվացված կլինեն: Մեր կուսակցությունը համատարած կոլեկտիվացման հիման վրա անց է կացնում վերջին շահագործող դասակարգի՝ կուլակության վերացման քաղաքականությունը:

Այժմ մեր կուսակցությունը և կոմյերիտները թյունը 16-րդ համագումարի վորոշումների հիման վրա մոբիլիզացիայի յին յինթարկում իրենց ուժերը և ուշադրությունը անասնուբուծական պրոբլեմը լուծելու համար: Կարելի յե վազորոք համոզված լինել, ընկերներ, վոր կվսակցությունը և կոմյերիտները թյունը այս պրոբլեմը կլուծեն ամբողջապես այնպես, ինչպիս լուծեցին հացահատիկային պրոբլեմը:

1931 թ. գյուղի սոցիալիստական հատվածը՝ կըկազմի 42 տոկ, իսկ նրա ապրանքային արտադրանքը՝ 50%-: Այդպիսով՝ գյուղատնտեսության մեջ ևս «ով-ում» հարցը հաջողության վրածվում է մեր կուսակցության ղեկավարության վրա:

Խոսելով մեր յերկրի ժողովրդական տնտեսության զարգացման տեմպերի մասին, բնորոշ է բերել դարձյալ մի օրինակ. մեր յերկրի սոցիալիստական շինարարության մեկ տարին հավասար է ցարական Ռուսաստանի 13 տարուն: Այստեղից յերևում է, թե ինչ բուռն տեմպով է աճում և առաջ շարժվում մեր ժողովրդական տնտեսությունը:

Մեր կուսակցության քաղաքականության հիման վրա աճում է նաև բանվորների և գյուղացիների նյութական բարեկեցությունը: Բանվորների աշխատավարձը 2 տարում բարձրացել է 12%-ով: 7-ժամյա աշխատանքային օրվա անցիկ են արդյունաբերության մեջ զբաղված բոլոր բանվորների 45,5%-ը: Անընդհա-

տականին անցել է բոլոր բանվորների 67%-ը: Մեր
յերկրում հիմնականում վերացվել է գործազրկությունը,
մինչդեռ կապիտալիստական յերկրներում նա
ամսե-ամիս, շաբթե-շաբաթ և որից որ աճում է:
Դյուղացիների նյութական բարեկեցությունը նույն-
պես անընդհատ բարելավվում է: Յես չեմ բերի տըվ-
յալներ, թե ինչպես բանվորների և դյուղացիների
բարեկեցության բարելավման հետ միասին աճում է
նաև բանվոր յերիտասարդության նյութական և կուլ-
տուրական բարեկեցությունը: Այդ մասին դուք բա-
վական տեղյակ եք: Յես ուզում եմ միայն ցույց տալ,
թե ինչպիսի նյութական գրության մեջ է գտնվում
արտասահմանի յերիտասարդությունը:

Գերմանիայում յերիտասարդ մեծագործը ստա-
նում է շաբաթական 6—8 ուրբ.: Այդպիսով՝ ամիսը
նա աշխատում է ամենաշատը 24—36 ուրբ.: Լեհաս-
տանում յերիտասարդ մանածագործը վաստակում է
ամսական 8 ուրբ.: Ֆրանսիայում՝ ամսական 14—16
ուրբ. և այդ այն ժամանակ, յերբ յերիտասարդու-
թյան աշխատանքային որը արտասահմանում հավա-
սար է 8—9—10 և 12 ժամվա: Գերմանիայում որի-
նակ, բանվոր յերիտասարդության 40%-ը աշխատում
է որական 10 ժամ, 30%-ը աշխատում է 9 ժամ: Ընդ-
հանուր գործազրկության աճի հետ միասին կապիտա-
լիստական յերկրներում ավելանում է նաև գործա-
զուրկների թիվը յերիտասարդների մեջ:

Վերջին տվյալներով արտասահմանի 25 միլիոն
գործազուրկներից 6 միլիոնը յերիտասարդ յեն: Ահա,
ընկերներ, այսպես է դրությունը կապիտալի յերկըր-
ներում, և այսպես է մեր Խորհուրդային Միության
ժողովրդական տնտեսության զարգացման գործը:

1. ՀՆԳԱՄՅԱԿԸ 4 ՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅԲԱՐԸ ՍՈՅԱԼԻՋՍՏԻ ՀԱՄԱՐ ՄԵՂ- ՎՈՂ ՊԱՅԲԱՐՆ Ե.

Մեր յերկրի բանվոր դասակարգը կուսակցության
դիկավարությամբ ձեռք բերեց խոշոր աջողություն-
ներ, հակառակ դասակարգային թշնամու կատաղի
դիմազրության, հակառակ աջ և «ձախ» յերկյերեսա-
նի ոպորտունիստներին, վորոնք պարտվեցին և գա-
ղափարապես միանգամայն սնանկացան: Այս բոլորը
դարձյալ մի ավելորդ անդամ հաստատում է բնկ.
Ստալինի առածը կուսակցության 16-րդ համագումա-
րում, թե մեր յերկրը թեվակոխել է սոցիալիզմի ժա-
մանակաշրջանը: 16-րդ կուսհամագումարում իր յեղ-
րակացման խոսքի մեջ նա ասել է:

«Պարզ է, վոր մենք արդեն դուրս են յեկել փո-
խանցիկ ժամանակաշրջանից, հասկանալով այդ հին
մտքով, մտնելով ուղղակի և ծավալուն սոցիալարա-
րության ժամանակաշրջանը ամբողջ Ֆրոնտով: Պարզ
է, վոր մենք արդեն թեվակոխել ենք սոցիալիզմի ժա-
մանակաշրջանը, վորովհետև այժմ սոցիալիստական
հատվածը իր ձեռքին ունի ամբողջ ժողովրդական
տնտեսության բոլոր տնտեսական լծակները, թեպետ
մինչև սոցիալիստական հասարակարգ կառուցելը և
դասակարգային տարբերությունները վոնչացնելը
գեռ շատ հեռու է»:

Ընկերներ, այդպիսով՝ մենք տնտեսական նոր
քաղաքականության ռելսերի վրա վոտք դրինք Նեպի
վերջին շրջանում և սոցիալիզմի առաջին ժամանակա-
շրջանում: Առաջին պայմանը, վորի հետևանքով ձեռք
են բերվել այդ վճռական հաջողությունները մեք

յերկրի սոցիալիզմի շինարարութեան գործում՝ դա-
կուսակցութեան գլխավոր գծի ճշտութեամբն է, մեր
կուսակցութեան և նրա ղեկավարութեամբ Լենինյան
կոմյերիտմիութեան վճռական պայքարը յերկու ֆրոն-
տով՝ աջ թեքման դեմ, վորը հեղափոխութեան զար-
գացման տվյալ ետապում հանդիսանում է գլխավոր
վտանգը, «ձախ» ոպիրտունիստները, հաշտողները և
Միբցովի, Լոմինաձեի և Շացկինի աջ—«ձախ» բլոկի
դեմ:

Հինգամյակը կատարել 4 տարում, 1931 թ.
ավարտել մեր յերկրի սոցիալիստան տնտեսութեան
հիմքի կառուցումը—ահա այն մեծագույն և մարտա-
կան խնդիրը, վորը համար աշխատելու յի Լենինյան
կոմյերիտմիութեան, այս հիմնական խնդրի շուրջը
մենք պետք է մոբիլիզացիայի յենթարկենք մեր
կոմյերիտական կազմակերպութեանները բոլոր ողակ-
ները:

Մեր յերկրի ձեռք բերած հաջողութեաններում
խոշոր դեր է կատարել Լենինյան կոմյերիտմիութեա-
նը: Կոմյերիտմիութեան քաղաքական և գործնական
նշանակութեանը տնտեսական կոլտուրական և հասա-
րակական քաղաքական այն բոլոր կարևորագույն
խնդիրների լուծման գործում, վորոնց համար աշխա-
տել են կուսակցութեանը և նրա ղեկավարութեամբ՝
բանվոր դասակարգը,—դա յերևում է ընկ. ընկ. կա-
զանովիչի և Կոսարևի զեկուցումից:

Խոնչով է բնորոշ մեր միութեան զարգացումը
8-րդ և 9-րդ համագումարների ժամանակաշրջանում:
Նա բնորոշ է նախ և առաջ կոմյերիտմիութեան
անընդհատ աճող ակտիվութեամբ, բանվոր և աշխա-
տավոր յերիտասարդութեան մասսաներում ունե-

ցած հեղինակութեան բարձրացումով: Մեր միու-
թեանը անցյալում, մասնավոր մինչև 8-րդ հա-
մագումարը ապրել է զգալի չափով ներկոմյերիտական
հարցերով: Այն ժամանակ աշխատանքի և կրթութեան
հարցերը միանգամայն որինական կերպով մեծ տեղ
եյին բռնում: Տնտեսական հարցերը կոմյերիտմիու-
թեան աշխատանքներում գլխավորը և առաջնը չեյին
կազմում: Այն ժամանակ կոմյերիտմիութեանը հան-
դես եր գալիս մի շարք կուլտուրական գործերում, իբրև
նախաձեռնող, և այն ժամանակները մենք դեռ շատ
թույլ մասնակցութեան եյինք ցույց տալիս տնտեսա-
կան խնդիրների լուծմանը: Այդ բնագավառում մենք
մինչև 8-րդ համագումարը չեյինք կարող պարծենալ
մեծ նվաճումներով: Այն ժամանակ կոմյերիտմիու-
թեանը միայն առաջին փորձերն եր անում, կոնկուրս-
ները, արտադրական փոխադարձ կանչերը, նոր սկսել
եյին ստեղծվել առաջին հարվածային բրիգադները
այնպիսի պրոլետարական խոշոր կենտրոններում, ինչ-
պես Լենինգրադը, Մոսկվան, Ուրալը: Մենք այն ժա-
մանակ արդյունաբերութեան աշխատանքներում դեռ
չեյինք տեսնում կոմյերիտմիութեան ծավալուն մաս-
նակցութեանը:

Մեր միութեան և առաջին հերթին ՀԼԿՅՄ
կենտկոմի միտքը զբաղված եր այն հարցով, թե
ինչպես մեր աշխատանքի ձևերը, մեթոդները և ամ-
բողջ սիստեմը հարմարեցնենք վերակառուցման ժա-
մանակաշրջանի պահանջներին: Մեզ մոտ նույնիսկ
մեր ակտիվի մեջ պատահում եյին մարդիկ, վորոնք
փորձում եյին սահմանափակել և նեղացնել կոմյերիտ-
միութեան մասնակցութեանը սոցիալարարութեանը:
Ուստի, պատահական չէ, վոր համամիութենական

6-րդ կոնֆերանցիայից հետո, յերբ ղրվեց «ալվելի լայնացնել կոմյերիտմիության մասնակցության ֆրոնտը յերկրի տնտեսական—կուլտուրական և հասարակական—քաղաքական կյանքում» լողունգը, կոմյերիտմիության առանձին ողակները ղբաղվում են ին ամեն ինչով, բայց ուշադրություն չեն ղարձնում այդ խնդրի վրա, տնտեսական հարցերը չեն ղին ղնում իրենց ուշադրության կենտրոնում:

ՀԼԿՅԵՄ կենտկոմը միության և բանվոր ու աշխատավոր ամբողջ յերիտասարդության ուշադրությանը ղարձրեց տնտեսական շինարարությանը մասնակցելու գործի վրա, վորովհետև այստեղ և ղակակարգային պայքարի սրությունը, Յերիտասարդությունը և կոմյերիտներին անկարելի յի ղաստիարակել բոլշևիկյան վոգով, առանց նրանց ակտիվ մասնակցության տնտեսական շինարարությանը: Հարկավոր եր կոմյերիտների բանվոր և աշխատավոր յերիտասարդության միլիոնավոր մասսաների ոգնությունը բոլշևիկյան կուսակցության տնտեսական շինարարությանը մասնակցելու համար: Հենց այդ խնդրի վրա յի աշխատել և կոմյերիտմիությունը: Լենինյան կորյերիտմիությունը, ինչպես այդ մասին հաճախ խոսվել է, հանգես յեկավ սոցմրցման նախաձեռնողի ղերում, իսկ այդ սոցմրցումը հետագայում մեր կուսակցության ղեկավարությամբ ղարձավ բանվորների ընդհանուր գործը: Կոմյերիտմիությունը խոշոր ոգնություն ցույց տվեց կուսակցությանը արդյունաբերության ամրացման, ղարգացման և վերակառուցման գործում, ակտիվ պայքար մղելով աշխատանքի կարգապայության համար, անցկացնելով տասնյակ հաղարավոր ռացիոնալիզատորական միջոցառումներ, պայ-

քարելով «նեղ տեղերը» հաղթահարելու համար և այլն և այլն: Նույն ժամանակամիջոցում միությունը սոցշինարարության վճռական և հանգուցային աշխատամասերն ուղարկեց 350.000 կոմյերիտ:

Կոմյերիտմիությունը մեծ նվաճումներով հասավ իր 9-րդ համագումարին նաև գյուղում կատարած աշխատանքներում: Այդ նվաճումները կայանում են ամենից առաջ նրանում, վոր գյուղի կոմյերիտմիությունը ցույց տվեց իրեն իրրև կուսակցության գծի համար ակտիվ պայքարող և խոշոր ոգնություն ցույց տվեց կուսակցությանը կոլխոզային և սովխոզային շինարարությունը ծավալելու գործում: Անցած ղարնանացանի կամպանիայի ժամանակ ղաշտերում աշխատել յեն 550.000 կոմյերիտներ: Այժմ կոմյերիտները 50% արդեն մտել և կոլխոզը: Կուսակցության խնդիրները գյուղում ակտիվ կերպով անցկացնելու և կոլխոզային ու սովխոզային շինարարությունը մասնակցելու հիման վրա Լենինյան կոմյերիտմիությունը գյուղում աճեց ղաղափարապես և քաղաքանապես, ստուգեց և ամրացրեց իր ղարքերի կայունությունը, ղգալիորեն մաքրվեց ոտար տարրերից: Հարկավոր է ընդգծել գյուղական կազմակերպությունների կատարած մեծ աշխատանքը այնպիսի տեղերում, վորտեղ չկան կուսակցական բջիջներ:

Վերջևս գյուղի կոմյերիտմիությունը կոլխոզների ամրացման գործում հետգհետ ղառնում և կուսակցության ակտիվ ոգնականը: Ահա, ընկերներ, թե ինչպես և մեր միության աշխատանքի ղրությունը տնտեսական ֆրոնտում այդ ժամանակաշրջանում:

Դուք գիտեք, վոր միության կենտկոմի ղեկտեմբերյան պլենումը արձանագրեց կոմյերիտմիության

աշխատանքի տեմպերի յետամնացությանը վերակա-
ռուցման ժամանակաշրջանի տեմպերից և թափից:
Ի՞նչի մեջ եր գտնուում այն ժամանակ կենտկոմի դեկ-
տեմբերյան պլենումը հետամնացության իմաստը:
Նրանում՝ վոր տնտեսական հարցերը գլխավոր հար-
ցերն չեյին ՀԼԿՑԵՄ աշխատանքներում, նրանում, վոր
կազմակերպությունները զգալի չափով աշխատում
եյին այնպիսի ձևով և մեթոդներով, վորոնք հատուկ
են վոչ թե վերակառուցման ժամանակաշրջանին, այլ
վերաշինման ժամանակաշրջանին: Այստեղից ել կենտ-
կոմի պլենումը ձևակերպեց իր խնդիրը՝ կոմյերիտ-
միության անգամների տմբողջ զանգվածով դառնալ
դեպի վերակառուցման ժամանակաշրջանի խնդիր-
ները:

Թ-րդ համագումարը իր վորոշումներում արձա-
նագրել է, վոր ՀԼԿՑԵՄ-ը հիմնականում շրջադարձ է
կատարել տնտեսական շինարարության կողմը և վոր
միության կենտկոմի դեկտեմբերյան պլենումի նշած
հետամնացությունը հիմնականում հաղթահարված է:
Լենինյան կոմյերիտմիությունը իր վիթխարի աշխա-
տանքի համար, վոր նա կատարել է տնտեսական
ֆրոնտում, կառավարության վորոշմամբ Թ-րդ համա-
գումարում պարզեցվառվեց «Աշխատանքի կարմիր
Դրոշի» ջրանշանով: (Ծավահարություններ):


Իայց, ընկերներ, գտնվեցին մարդիկ, վորոնք կար-
ծում եյին, մենք գտնվում ենք միայն վճռական շրջ-
ադարձի շրջանում: Նրանք Թ-րդ համագումարի բաց-
վելուց առաջ, յիրը գումարում եյին Լենինյան
կոմյերիտմիության անցած կտապը, պնդում եյին, վոր
միությունը գտնվում է միայն շրջադարձի շրջանում:
Դրանով եր առաջադրում մասնավորապես կոմյերիտ-

միության Լենինգրադի մարզկոմի քարտուղարը, կըր-
կնելով միևնույնը: Կոմյերիտմիության Լենինգրադի
կազմակերպությունն ուղղեց իր քարտուղարին և ավեց
կոմյերիտմիության դրության միանգամայն ճիշտ գնա-
հատությունը Թ-րդ համագումարից առաջ:

Մենք այժմ կարող ենք պնդել, վոր այն ձևերը
և մեթոդները, վորոնց միջոցով մեր միությունը կազ-
մակերպում է մասսաների ակտիվությունը սոցշինա-
րարության մեջ, հիմնականում համապատասխանում
են այն պահանջներին, վորոնք առաջադրվում են վե-
րակառուցման ժամանակաշրջանի կողմից:

Այն վեճը, թե մեր միությունը իր յերեսը դար-
ձրել է տնտեսական շինարարության կողմը, անպետք
և պարապ խոսակցություն չէ, վորովհետև մենք մեր
միության հետագա խնդիրները պետք է վորոշենք
նայած այն բանին, թե ինչպես կվորոշվի այս դրու-
թյունը: Յեթե մենք ընդունենք, վոր մեր միությունը
գտնվում է միայն շրջադարձի շրջանում, այն ժա-
մանակ մենք այնպես կանենք, վոր մեր միությունը
կատարի այդ շրջադարձը: Իսկ յիրք մենք Լենինյան
կոմյերիտմիության աշխատանքի փաստերի և թվերի
անալիզի հիման վրա գտնենք, վոր ՀԼԿՑԵՄ-ը հիմնա-
կանում իր յերեսն արդեն դարձրել է տնտեսական
շինարարության կողմը, յեղնելով այս դրույթից, մենք
կտանք միությանը հետագա խնդիրները, կտանք նրա
աշխատանքի հետագա հեռանկարները: Ահա թե ինչու
յես կրկնում եմ, վոր այն վեճը, թե մեր միությունը
իր յերեսը դարձրել է տնտեսական շինարարության
կողմը, թե վոչ, սկզբունքային նշանակություն ունի
մեր միության խնդիրները ճիշտ վորոշելու համար:

Գտնվեցին մարդիկ, վորոնք առաջ քաշեցին



այսպես կոչված «պերմանենտային» հետամնացութեան թերութեան: Այդ ընկերների կարծիքով, ուրեմն քանի վոր կոմյերիտմիութեան առջև դրվում են նորանոր խնդիրներ, նա այդ խնդիրներից հետ ե մնում «պերմանենտ կերպով», և այդ հետամնացութեանը արտահայտվում է, իբրև, վոչ այն ձևով, ինչպես հիմնականում հաղթահարված հետամնացութեանը: Այդպիսով՝ որչե-տիվորեն ստացվում է, վոր կոմյերիտմիութեան՝ իբրև կուսակցութեան առաջին ոգնականի առջև դրված խնդիրները միութեան ուլժերից վեր են: Այսպես կարող են պնդել այն մարդիկ, ովքեր ՀԼԿՅԵՄ առջև դրված վիթխարի խնդիրներից խուճապի են մատնվել: Մեր միութեանը ընդունակ յե անցկացնելու կուսակցութեան գլխավոր գիծը և լուծելու այն խնդիրները, վոր դնում է նրա վրա կուսակցութեանը: Անհրաժեշտ է ամենաանողոք և վճռական դիմադրութեանը ցոյց տալ այդ «թերիային»: Բայց մենք վաղորոք պետք է նախադգուշացնենք մեզ հաջողութեան-ներից առաջ յիկող առանձնահատուկ գլխավորությունի վտանգից:

Վերջերս մեր կուսակցութեանը իր աշխատանքի համար ստացավ մի շարք միանգամայն արժանի դո-վասանքներ: Բայց դրանից մեր գլուխը չպետք է պտտվի: Մենք պետք է պարզ հաշիվ տանք մեզ, վոր մեր առջև դրված են մեծ խնդիրները, վորոնք «ինք-նահոսով» չեն կարող կատարվել: Նրանք պա-հանջում են մեծագույն լարվածութեան և կազ-մակերպվածութեան: Մենք պետք է պարզ հաշիվ տանք մեզ, վոր մենք դեռ շատ թերութեաններ ու-նենք, վորոնք պետք է վերացվեն բոլշևիկյան ինքնա-քննադատութեան կրակով: Այդ բոլորը մենք պետք է հիշենք, Մենք պարծենկոտ չպետք է լինենք:

Ինչու՞ն են կայանում մեր թերութեանները: Սրանք կայանում են թեկուզ հենց նրանում, վոր մենք դեռ չենք կազմակերպել կոմյերիտների և յերի-տասարդութեան տեխնիկական լավ ուսուցումը, բոլ-շևիկյան շարժում չենք ծավալել նոր տեխնիկայի յու-րացման համար, մենք դեռ թույլ ենք աշխատում ու-ցիռնալացման բնագավառում:

Մենք մինչև այժմ դեռ չենք կատարել կուսակ-ցութեան 16-րդ համագումարի գերեկտիվը բոլոր կոմ-յերիտներին հարվածային շարժման մեջ դնելու մա-սին: Առաջավոր կազմակերպութեաններում հարվա-ծայնութեան ընդգրկումը հավասար է 75—80%, բայց կան կազմակերպութեաններ, վորոնք կանգ են առել 40—50% վրա: Մենք այստեղ դեռ հիմնավորապես աշխատելու յենք:

Հարկավոր է ուղղակի ասել, վոր մենք հարկա-վոր չափով դեռ չենք տիրապետել տնտեսական շինա-րարութեան մի շարք հանգույցային հարցերի: Բավա-կան է ցույց տալ մեր թույլ աշխատանքը նոր շինա-րարութեան բնագավառում կամ որինակ՝ քարածխա-յին արդյունաբերութեան մեջ: Դո՞նբասի կոմյերիտա-կան կազմակերպութեանը վատ եր աշխատում տնտե-սական ֆրոնտում: Հարկավոր է նշել, վոր վերջին ժա-մանակներս ՀԼԿՅԵՄ կենտկոմի և Ուկրաինայի ԼԿՅԵՄ-ի կենտկոմի ձեռք առաջ վճռական միջոցա-ռումները շնորհիվ կոմյերիտմիութեան Դո՞նբասի կազ-մակերպութեանը ունեցավ մի շարք աջողութեաններ: Կամ ասենք հենց տրանսպորտում՝ մենք մինչև այժմ դեռ ելի վատ ենք աշխատում: Կուսակցութեան կենտ-կոմի և ժողկոմխորհի վերջերս հրապարակած դիմու-մը տրանսպորտի աշխատանքում կոմյերիտմիութեա-նը շատ բան է պարտավորեցնում:

Յես արդեն ասացի՝ հիմնական խնդիրը կայանում է նրանում, վոր հնգամյակը կատարենք չորս տարում: Հնգամյակը չորս տարում կատարելու համար մղվող պայքարի հիման վրա մենք հաջողությամբ կիրադործենք մեր լոգունգը «հասնել և անցնել» կապիտալիստական յերկրներից տեխնիկապես և տնտեսապես:

Մեր ժողովրդական տնտեսության ծավալման տեմպերը թե՛ արդյունաբերության և թե՛ գյուղատնտեսության բնագավառում անցնում են կապիտալիստական բոլոր յերկրների տեմպերից: Մակայն չնայած այն բանին, վոր մենք արագ առաջ ենք շարժվում, մենք ելի դեռ մեծ չափով յետ ենք մնում: Այսպես որինակ՝ Ամերիկայում 1929 թ. նավթ ստացվել է 143 միլ. տոնն, մեղ մոտ՝ 19 միլ. տոնն, իսկ 1931 թ. պլանով նախագծված է հասցնել 26 միլ. տոնն: Եներգիայի արտադրությունը Ամերիկայում 1929 թ. հավասար էր 117 միլիարդ կիլավատժամի, իսկ 1930 թ. 9 միլիարդի, 1931 թ. պլանով նախագծված է 12 միլիարդ: Ամերիկայում քարածուխ ստացվել է 546 միլ. տոնն, իսկ մեզնում 1930 թ. 56 միլ. տոն: 1931 թ. յենթադրվում է ստանալ $83\frac{1}{2}$ միլ.: Քարածխի ստանալու գործում այս տարի Ֆրանսիայից առաջ ենք գնում, իսկ չուգունի արտադրության գործում՝ Ֆրանսիայից և Անգլիայից:

Այդպիսով՝ հնգամյակի 4 տարում կատարելու համար մղվող պայքարը միեւնույն ժամանակ մի պայքար է կապիտալիստական յերկրներին «հասնելու և անցնելու» լոգունգը հաջողությամբ կատարելու համար:

II. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅԳԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՅԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ Ե.

Մեր կուսակցությունը դրել է մարտական խնդիր՝ ավարտել 31 թ. սոցիալիստական տնտեսության հիմքի կառուցումը:

Այդ ի՞նչ է նշանակում:

«Ստեղծել սոցիալիզմի տնտեսական բազա նշանակում է գյուղատնտեսությունը միացնել սոցիալիստական արդյունաբերության հետ մի ամբողջական տնտեսության մեջ, յենթարկել գյուղատնտեսությունը սոցիալիստական արդյունաբերության ղեկավարությանը, քաղաքի և գյուղի փոխհարաբերությունը կանոնավորել գյուղատնտեսության և արդյունաբերության արտադրանքի ուղղակի փոխանակության հիման վրա, փակել և վերացնել այն բոլոր ճանապարհները, վորոնց միջոցով ստեղծվում է դասակարգը, վորոնց ոգնությամբ ամենից առաջ ստեղծվում է կապիտալը, ստեղծել վերջի վերջո արտադրության և բաշխման այնպիսի պայմաններ, վորոնք ուղղակի տանում են ղեպի դասակարգերի վոչնչացում» (Ստալին):

Ի՞նչու՞մն է կայանում մեր խնդիրը: Խնդիրը կայանում է նրանում, վոր մոբիլիզացիայի յենթարկենք կոմյերիտմիության անդամների և պրոլետարական կոլեկտիվին և ամբողջ աշխատավոր յերիտասարդության 3 միլիոնանոց մասսայիստեղծագործական նախաձեռնությունը ու ինքնագործունեյությունը ել ավելի յեռադուն ոգնություն ցույց տալու կուսակցությանը սոցիալիստական ծավալուն հարձակումը ամբողջ ֆրոնտով իրականացնելու գործում:

Հարկավոր է կոմյերիտմիության աշխատանքներով ընդգրկել անտեսական-կուլտուրական և հասարակական—քաղաքական շինարարության տեղամասերը, առանց բացառության, կենտրոնացնելով գլխավոր ուշադրությունը ամենանեղ աշխատամասերում:

Սրա մեջ է կայանում, ընկերներ, կոմյերիտմիության խնդիրը:

Ահա թե ինչու մենք առանձին համառությամբ պահանջելու յենք կոմյերիտմիության բոլոր կազմակերպություններից, առանց բացառության, խորապես հասկանալ արտադրական պրոցեսները, տիրապետել նոր տեխնիկային, լավ ծանոթանալ մեխանիկացիային, մի շարք ուրիշ հարցերի, վորոնց այժմ անհրաժեշտ է իմանալ, վերապահել կարողանանք մոբիլիզացիայի յենթարկել յերիտասարդ մասսաներին սոցիալիստական շինարարության խնդիրները կատարելու համար: Մենք այժմ պետք է պահանջենք աշխատանքի տեմպերի բարձրացում, աշխատանքի վորակի անընդհատ բարելավում:

Իսկ ի՞նչ հիմնական հանգույցային հարցեր են լինելու մեր ուշադրության կենտրոնում արդյունաբերության զարգացման բնագավառում: Դա, ընկերներ, մետաղն է, քարածուխը, նավթը, տրանսպորտը, խոշոր շինարարությունը: Արդյունաբերության բնագավառում այս աշխատամասերը պետք է միջ տգտնվեն կոմյերիտմիության ամբողջ աշխատանքի ուշադրության կենտրոնում: Հարկավոր է ընդգծել նաև վորակական ցուցանիշների համար մղվող պայքարի խնդիրը, վորպեսզի քանակական ցուցանիշների կատարվելու և գերակատարվելու հետ միասին զգալիորեն բարելավվեն վորակական ցուցանիշները, Ինքնավստիքի իջեցման

խնդիրը և արտադրության խնայողությունը նույնպես չափազանց մեծ խնդիր է, վորի կատարման համար մենք միշտ պետք է կենտրոնացնենք մեր ուշադրությունը:

Մենք ելեքտրիֆիկացիայի շեֆերն ենք: Հարկավոր է ուղղակի ասել, վոր ելեքտրիֆիկացիայի բնագավառում, մի քանի կազմակերպությունների բացառությամբ, մենք թույլ ենք աշխատում: Դա վերաբերում է կոմյերիտմիության նաև մեր անդրկովկասյան կազմակերպության:

Այժմ մենք պետք է անցնենք այդ գործին, ինչպես հարկն է: Անհրաժեշտ է ծավալել մեր յերկրի ելեքտրիֆիկացիայի գաղափարների և կոնկրետ ուղիների լայն պրոպագանդը: Ելեքտրա-արդյունաբերության և ելեքտրաշինարարության վրա անհրաժեշտ է մեխել կոմյերիտական կազմակերպությունների ասիստրյա ուշադրությունը:

Այստեղ մենք փոխադրելու յենք մարդիկ, այստեղ մենք պետք է կազմակերպենք կոմյերիտական կազմակերպությունների խիստ հսկողությունը, պահանջելով նրանցից բոլշևիկյան տեմպեր կուսակցական դիրեքտիվների կատարման գործում:

Խնդիրների լուծումը յերկրի ինդուստրացման բնագավառում պահանջում է ամենից առաջ ավելի բարձր աստիճանի վրա դնել սոցմրցակցությունը և հարվածայնությունը: Հարվածայինները պետք է առաջավոր լինեն վոչ միայն արտադրության մեջ, այլ և ամբողջ հասարակական—քաղաքական կյանքում:

Բայդ դրա համար հարկավոր է սիստեմատիկ համառ աշխատանք տանել հարվածայինների հետ, իսկ մեզ մոտ այդ ամեն տեղ չի արվում:

Հաճախ աշխատելով վորքան կարելի յե ավելի շատ բանվորներ և բանվոր յերիտասարդներ ընդգրկել հարվածայնությամբ, ամենորոյա աշխատանքները անբավարար են տանում նրանց հետ: Մենք պետք է բոլոր կոմյերիտներին և բանվոր յերիտասարդներին գլխովին ներգրավենք հարվածայնության և սոցիալ-դեմոկրատիայի մեջ: Դա մեր մարտական խնդիրն է: Բայց դրա հետ միասին հարկավոր է ամեն կերպ բարելավել հարվածայնների քաղաքական-դաստիարակչական աշխատանքը:

Դյուրեղում մեր ուշադրության կենտրոնում լինելու յեն աշխատիս հանդուցյալին և վճռական աշխատանքներ՝ մասնակցություն կոլխոզային և սովխոզային շինարարությանը, բամբակ, անասնաբուծություն: Մենք պետք է յեննենք այն բանից, վոր հնգամյակի վերջում հիմնականում ԽՍՀՄ-ն կոլլեկտիվացվելու յե: Մնադրելով հասի պայմաններում մեր խնդիրն է համառ պայքար մղել համատարած կոլլեկտիվացումը նախապատրաստելու և այդ հիման վրա կուլակությունը, իբրև դասակարգ, վերացնելու համար:

Մնադրած է վճռական պայքար մղել ինքնահոսի աջ ուղիով յատկանշվող իրերի IX համագումարի վերջում բոլոր կոմյերիտներին կոլխոզների մեջ ներգրավելու մասին՝ կոմյերիտություն բոլոր կազմակերպությունների մարտական խնդիրն է դառնալու:

Կոմյերիտությունը դեռ շատ թույլ է մասնակցում կոլխոզների տնտեսական—արտադրական խնդիրների լուծմանը:

Կոլխոզների արտադրական հարցերը հիմնական հարցեր են դառնալու գյուղի կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքներում:

Մեր գյուղական կազմակերպությունները կոմյերիտ մասսաների կուլտուր քաղաքական մակարդակի բարձրացման ընադավարում նույնպես յետ են մնացել: Ահա թե ինչու ներկայումս պահանջվում է զգալիորեն բարձրացնել քաղաքական-դաստիարակչական աշխատանքը:

Գրեց համագումարը նաեւ, վոր «Դասակարգային պայքարի սրվածությունը յերկրում իր արտահայտությունն է գտել նաեւ յերիտասարդության մեջ: Կուլակը, վոր ամեն տեսակ ձևերով և մեթոդներով փորձում է կազմակերպել իր ուժերը խորհրդային իշխանության քաղաքականությանը դիմադրելու համար, իր գաղափարախոսական ազդեցությամբ փորձում է ներխուժել յերիտասարդության առանձին խավերի մեջ և ձևակերպել իր գործակալությունը նաեւ կոմյերիտության մեջ: Մասնավորապես, կուլակության պայքարը յերիտասարդության վրա ազդեցություն ունենալու համար՝ արտահայտվում է յերիտասարդության ազանդավորական կրոնական կազմակերպություններ ստեղծելու և յերիտասարդության մեջ ազգային ատեւությունը հրահրելու փորձերի միջոցով:

Համագումարը վճռականապես դատապարտում է յեղած վորոշ տրամադրությունները՝ դասակարգային պայքարը համատարած կոլլեկտիվացման ուղիներում դադարեցնելու մասին: Դասակարգային թշնամին փորձում է դասակարգային պայքարի տարրերը տանել կոլխոզ, մի շարք դեպքերում ներս խուժելով կոլխոզի մեջ: Նա փորձում է հրահրել զրփողական տրամադրությունները, կազմակերպել դիմադրության աշխատանքի ճիշտ կազմակերպման, յեկամայինների ճիշտ բաշխման դեմ և այլն, ոգտագործելով այդ կոլխոզային շարժման դեմ պայքարելու համար»:

Կոմյերիտական կազմակերպությունների խնդիրը առկանում է նրանում, վոր կուսակցություն գլխավոր գծի համար և դասակարգային թշնամու դեմ մղվող պայքարում «ծավալենք ամբողջ փրոնտով դադափա-րական և կազմակերպչական առջավ կոլտղա-գյուղա-ցիական յերիտասարդության հիմնական մասսան և բանվորական յերիտասարդության ամբողջ մասսան նվաճելու համար»:

Մանրագծերը և, վոր կոմյերիտիություն պրոլե-տարական կազմակերպությունները մեծ ոգնություն ցույց տան գյուղական կազմակերպության ամբողջ աշխատանքին:

III. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱ-ՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՄՐԱՅՆՈՒՄ ԵՆ ՍՈՑԻԱ-ԼԻԶՄԻ ԴԻՐԳԵՐԸ.

Յեն չեմ խոսի այն մեծ հաջողությունների մա-սին, վոր կոմյերիտիությունը ձեռք է բերել կուլ-տուրական շինարարության բնագավառում, հաճախ փշրելով ոպորտունիստների և բյուրոկրատների դիմա-դրությունը:

Կուլտուրական շինարարության բնագավառում մեր առջև չափազանց մեծ խնդիրներ են դրված: Այդ խնդիրները կայանում են ամենից առաջ նրանում, վոր ե՛լ ավելի ուժեղ տեմպով ծավալենք ֆարգործու-նների շինարարությունը, բարելավենք և ամրացնենք նրանց աշխատանքը, կտրիվ ոգնություն ցույց տանք կուսակցությանը պարտուսի գործում և այլն:

Այստեղ հարկավոր է խոսել վորոշ ընկերների մա-սին, վորոնք այդ բնագավառում բոլորովին չեն հասկա-ցել 16-րդ համագումարի վորոշումը: Կուսակցության

16-րդ համագումարի վորոշումները ցույց են տալիս, վոր ֆարգործուսը վորակյալ կադրերի նախապատրաստ-ման հիմնական ձևն է, բայց միևնույն ժամանակ մեր զարգացման ավյալ շրջանում անհրաժեշ է ունենալ կադրերի նախապատրաստման նաև կարճժամա-նակյա ձևեր: Այստեղ վրմանք շեղվում են, բո-լորովին անուշադրության մատենելով այս կարճ-ժամանակյա ձևերը: Այդ ճիշտ չե: Ինքնըստին-քյան հասկանալի չէ, վոր ֆարգործուսների զար-գացման և ամրացման խնդիրը մենք վոչ մի դեպքում չպետք է հեռացնենք մեր ուշադրության սահմաննե-րից: Խնդիրը կայանում է նաև նրանում, վոր ընդհա-նուր պոլիտեխնիկական կրթությամբ ընդգրկենք ամ-բողջ բանվոր յերիտասարդությունը: Հարկավոր է ու-ժեղ կերպով ընդգծել, վոր մենք թեպետ և պարտուսի շեֆերն ենք, բայց դեռ շատ քիչ բանենք արել: Մենք մեղ վրա վերցրել ենք մի շարք պարտավորություն-ներ պարտուսի վերաբերմամբ, մինչ դեռ թույլ ենք աշխատում:

Ազգային հանրապետություններում և մարզե-րում նկատվում է արդյունաբերության խոշոր աճ, մենք մեծ հաջողություններ ունենք գյուղատնտեսության սոցիալիստական վերակազմութուն բնագավառում: Ծավալվում են մեծ թվով բարձրագույն, միջնակարգ և ստորին ուսումնական հաստատություններ, վերաց-վում է աշխատավոր մասսաների անգրագիտությունը, կառուցվում են հիվանդանոցներ և կուլտուրական ու-րիշ հիմնարկություններ:

Որինակ, Միջին Ասիայում մինչև 1917 թ. բնակ-չության մեջ գրագետներ յեղել են 1⁰/₁₀, իսկ այժմ՝ 30 — 40⁰/₁₀:

կոմյերիտմիութեան ազգային կազմակերպութեան ներկայումս անդամները կազմի մեջ կեսից ավելին ռուսներ չեն: Առանձնապես կարևոր խնդիրն է հանդիսանում ազգայիններից (նացիոնալ) արդյունաբերութեան համար կազմել նախապատրաստել: Պետք է ուղղակի ասել, վոր շատ տեղ իշխում է ինքնահոսք, դեռ չկա լավ կազմակերպված աշխատանք: Դեռ չկա կազմակերպված սխառմատիկ աշխատանք՝ գործարանները և ֆաբրիկաները նոր յեկած յերիտասարդների մեջ: Հարկավոր է ամենավճռակա՞ն ձևով պայքարել այնպիսիների դեմ, վորոնք կուլտուրական շինարարութեան մեջ ազգային ձևի տակ փորձում են առաջ քաշել բուրժուական բովանդակութեան, նաև այնպիսիների դեմ, վորոնք ինտերնացիոնալիզմի դրոշի տակ փորձում են վիժեցնել ազգային կուլտուրական շինարարութեանը: Մենք պայքարում ենք՝ ձևով ազգային և բովանդակութեամբ պրոլետարական կուլտուրայի համար: Խնդիրը կայանում է նրանում, վոր ազգային—կուլտուրական շինարարութեան պրոբլեմի լուծման գործում կոմյերիտմիութեանը կուսակցութեան ղեկավարութեամբ առաջին շարքերում լինի:

Մի շարք դեպքերում արվեստի և գրականութեան մեջ դեռևս անբավարար է կոմյերիտական կազմակերպութեանների մասնակցութեանը, կուսակցութեան և կոմյերիտմիութեան թշնամի հայացքները պատշաճ դիմադրութեան ստանում են վոչ միշտ:

Անհրաժեշտ է մոբիլիզացիայի յենթարկել մասսաներին՝ հետադառնել վճռականապես պայքարելու համար ազգային թեքումների, մեծապետական շովինիզմի, իբրև գլխավոր վտանգի, ինտերվենցիային

ձեռնառու տեղական նացիոնալիզմի և հաշտվողականութեան դեմ:

IV. ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱՅՆԵԼ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՒԿԸ.

Խոչալես է մեր միութեան աճի գրութեանը: Մինչև 8-րդ համագումարը կոմյերիտմիութեան մեջ բանվորներ յեղել են 682.000, մինչև 9-րդ համագումարը բանվորներ յեղել են մեկ միլ. 10 հազար, բաւրակներ յեղել են 160 հազար, դարձել են 295 հազար. Այդպիսով՝ մեր միութեան պրոլետարական միջուկը աճել է 44,8%—ից, մինչև 48,8%:

Բայց մենք, բացի թվերից, պետք է տեսնենք այն պրոցեսները, վորոնք տեղի յեն ունենում կոմյերիտական կազմակերպութեան մեջ: Նրանք կայանում են նրանում, վոր մեր միութեան բանվորական շերտի մեջ մենք արդեն ունենք աշխատանքային ֆրոնտում տասնյակ հազարավոր հարվածայիններ և հերոսներ:

Գլուղում մեր կազմակերպութեանները թեպետ զանդաղ կերպով, բայց հետզհետ հիմնականում զաւնում են կոլեկտիվին յերիտասարդներից բաղկացած կազմակերպութեաններ: Մենք այդ պրոցեսները պարտավոր ենք տեսնել, վորովհետև նրանք հեշտացնում են մեր այն խնդիրների լուծումը, վոր դրել է կուսակցութեանը մեր առջև:

8-րդ և 9-րդ համագումարների ժամանակամիջոցում Լենինյան կոմյերիտմիութեան շարքերից հեռացել է մեկ միլիոն մարդ: Հարց է ծագում՝ ի՞նչ յեղան նրանք: Մի մասը մտավ կուսակցութեան մեջ, մյուս մասը հեռացվել է, յերիտասարդների մի մասն էլ հեռացել է իր կամքով: Վոր մի մասը հեռացել է Լենինյան կոմ-

յերիտմիության շարքերից իր կամքով՝ դա արժանի
յե հատուկ ուշադրության: Հետևապես, վոչ բոլոր
կազմակերպություններն ընդունակ են կազմակերպե-
լու իրենց աշխատանքը նոր յեկած յերիտասարդու-
թյան հետ:

Անհրաժեշտ է դրսևվորել առանձին մեղմություն
և անհատական մոտեցում, վոր մեր միության մեջ
ամեն մի նոր յեկող կարողանա գտնել իր տեղը և
մասնակցի սոցշինարարությանը:

ՀԼԿՅԵՄ 9-րդ համագումարում քննեց այն հար-
ցը, թե այժմ ի՞նչը կատարենք՝ կոմյերիտմիության
շարքերի դուռը, թե՞ ստուգումը:

Համագումարը վորոշեց անցկացնել ստուգում:
Ի՞նչու, ընկերներ:

Վորովհետև կոմյերիտմիության պայքարի ամ-
բողջ ժամանակաշրջանը, 8-րդ համագումարից մինչև
9-րդ, յեղել է դասակարգային սրված պայքարի շըր-
ջան, կոմյերիտմիությունը զգալի չափով գտվել է մեղ
ոտար և անպետք տարրերից: Ներկայումս գտում էի
պահանջվում, բավական է ստուգել կոմյերիտմիու-
թյան շարքերը՝ գլխավորապես միության այս կամ
այն անդամի սոցիալական դրությունը ճիշտ վորոշե-
լու տեսակետից:

Սշխատանքի պրոցեսում անհրաժեշտ է գտվել դա-
սակարգայնորեն ոտար և քամավող տարրերից, վորոնք
նեքս են մտել կոմյերիտական կազմակերպության ա-
ռանձին ողակների մեջ: Մեր խնդիրն է՝ ծավալել մար-
տական աշխատանք՝ կոմյերիտմիությունը մոտակա-
յում բազմամիլիոն կազմակերպություն դարձնելու
համար:

Մենք ունենք աճման հսկայական բազա:

Մեր կոմյերիտմիությունը առայժմ ընդգրկել է
բանվոր յերիտասարդության 48⁰/₀-ը: Հարկավոր է
ուշադրություն դարձնել և այն բանի վրա, վոր
այժմ Ֆաբգործուսներում սովորում է 600.000 մադդ:
Սրանց կոմյերիտմիությունը դեռ շատ քիչ է ընդ-
գրկել:

Կոմյերիտմիության 9-րդ համագումարը առա-
ջագրեց այսպիսի խնդիր՝ Լենինյան կոմյերիտմիու-
թյամբ ընդգրկել Ֆաբգործուսների բոլոր աշակերտնե-
րին: Այս խնդիրը պետք է անպայման կատարել:
Ֆաբգործուս մտնող յերիտասարդությունը մեր ար-
դյունաբերության մեջ կարող է խոշոր դեր խաղալ,
նա արդեն խաղում է այդ դերը, և նա պետք է լինի
Լենինյան կոմյերիտմիության մեջ:

Ի՞նչի մեջ է կայանում մեր քաղաքականությու-
նը աճի բնագավառում: Նա կայանում է նրանում,
վոր հարկավոր է ուժեղացնել այդ խնդիրը կատարե-
լու համար մղվող պայքարը՝ բանվոր և բատրակ յե-
տասարդներին կոմյերիտմիության մեջ 100⁰/₀-ով ըն-
դունելու գործում:

Գյուղում կոմյերիտմիությունը պետք է աճի
գլխավորապես և զերազանցապես համատարած կոլ-
լեկտիվացման ռայոններում ի հաշիվ առաջավոր կոլ-
խոզային յերիտասարդության: Կոմյերիտմիության
մեջ կոլխոզային յերիտասարդության միջից պետք է
ընդունել այն յերիտասարդներին, վորոնք դասակար-
գային պայքարում իրենց ցույց են տվել կուսակցու-
թյան հավատարիմ ոգնականներ, վորոնք որինակ են
հանդիսանում կոլխոզի արտադրական խնդիրների
լուծման գործում և հասարակական-քաղաքական աշ-
խատանքներում: Հարկավոր է նույնպես հաստատ գոր-

ծաղրել Գ-ը համագումարի վորոշումները՝ վոչ համատարած կողիկտիվացման ռայոններում կոլտոզնիկ, չքավոր և միջակ յերիտասարդության հաշվին աճելու մասին:

Կոմյերիտմիության Գ-ը համագումարը առանձին ուշժով ընդգծեց կոմյերիտմիություն անդամների քաղաքական-տեսական մակարդակը բարձրացնելու խնդիրը: Կոմյերիտ մասսաների քաղաքական-տեսական մակարդակի բարձրացումը կարևորագույն պայման է հիմնականում ղեպի տնտեսական շինարարությունը կատարված շրջադարձի ամրացման և ՀԼԽՍՖ ղերը սոցիալիստական շինարարության մեջ էլ ավելի բարձր աստիճանի վրա վրա դնելու համար:

Անհրաժեշտ է վճռականապես պայքարել կազմակերպության վորոշողականերում քաղուսման ուղորտունիստական թերագնահատման դեմ: Ուրեմն՝ ի՞նչն է պակաս քաղուսումը կազմակերպելու համար: Պակասում է քաղկրթության թերությունների խիստ ինքնաքննադատությունը, պակասում է ղեկավարության ամուր հսկողությունը, պակասում են սոցմրցման մեթոդները, վորոնք պետք է փոխադրվեն քաղկրթության ընագավառը: Մենք այդ պետք է անպայման աջողեցնենք:

Մեր խնդիրները՝ ղեպի տնտեսական շինարարությունը հիմնականում կատարված շրջադարձի ամրացման և կոմյերիտմիության ղերը սոցշինարարության մեջ էլ ավելի բարձր աստիճանի վրա դնելու գործը հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է, վոր մենք միշտ կատարելագործենք կազմակերպության և ղեկավարության աշխատանքի ձևերը և մեթոդները, շարունակենք մեր ամբողջ գործունեությունը վերա-

կազմությունը, հարմարվելով սոցիալիզմի առաջին ժամանակաշրջանի խնդիրներին: Մասնաշխատանքի ծանրության կենտրոնը պետք է փոխադրել ցեխերը, ագրեգատները, հորերը, ողակները և հերթերը:

Անկուսակցական բանվոր յերիտասարդության հետ տարվող մասնաշխատանքը այժմ առանձին նշանակություն ունի: Այդ աշխատանքի մեջ մենք շատ թերություններ ունենք: Որինակ՝ մենք թույլ ենք աշխատում գիշերային հերթերում:

Յեթե Ուրալի և Սիբիրի կոմյերիտների առջև դրված է Ուրալ—Կուզբասի կառուցմանը մասնակցելու խնդիրը, միության մյուս կազմակերպությանները պետք է ամեն կերպ ոգնեն նրանց: Յեթե մեր կազմակերպության առջև դրված է բամբակի ծրագիրը կատարելու խնդիրը, դա չի նշանակում, վոր, ասենք Իվանովոյի կազմակերպությունը կամ մյուս կազմակերպությունները չպետք է մասնակցեն այդ գործին: Մեր աշխատանքը պետք է դրված լինի այնպես, վոր մի կազմակերպություն ոգնի մյուսին: Պետք է պրակտիկայում մտցնել աշխատանքի այնպիսի մեթոդներ, վոր, ասենք թե, Իվանովոյի կազմակերպությունը կանչել է կոմյերիտմիության Միջին Ասիայի կազմակերպության ներկայացուցչին (Միջին Ասիայի բամբակը ուղարկվում է Իվանովո, և նրանք տնտեսության զծով անմիջապես կապված են) ստուգելու, թե ի՞նչպես է աշխատում Միջին Ասիայի մարդկուր: Վերջինս իր հերթին կանչում է Իվանովոյի մարդկուրի ներկայացուցչներին և հարցնում, թե ի՞նչպես են նրանք մասնակցում տեքստիլ արդյունաբերության աշխատանքին:

Այժմ բարձր պահանջներ են առաջադրվում զեկավարութանը: Հասկանալի չե, վոր մեր զեկավարությունը գաղափարապես քաղաքանապես, տնտեսապես, գործնականապես և կազմակերպչորեն զգալի չափով աճել ե:

Մենք այժմ միության ղեկավարությունից պահանջում ենք միացնել իր աշխատանքների մեջ՝ կուսակցական պարզ գիծը, բարձր գաղափարական—քաղաքական մակարդակը, կոնկրետ և խիստ հսկողությունը: Յերբեմն կոմյերիտմիության կոմիտեն, բռնելով միանգամայն ճիշտ քաղաքական գիծ, խիստ ընդհանուր ձևով ե ղեկավարում կազմակերպության մասնակցությունը տնտեսական-կուլտուրական շինարարությանը: Ավելին՝ ղեկավարությունը յերբեմն գործնականորեն չի կարողանում վորոշել տնտեսության և կուլտուրական շինարարության այս այն ճյուղի կոնկրետ խնդիրները: Դրա բացատրությունը պետք ե վնտրել մեր ակտիվի տնտեսական և տեխնիկական անբավարար գրագիտության մեջ:

Ինքնըստինքյան հասկանալի չե, վոր ճիշտ քաղաքական գիծը այսուհետե ել պետք ե հանդիսանա կոմյերիտմիության ամեն մի կազմակերպության հաջող աշխատանքի գլխավոր պայմանը: Բայց ներկա ըոպյին առանձին համառությամբ առաջ ե քաշվում ակտիվի տնտեսական գրագիտության բարձրացման խնդիրը: Դրա համար հարկավոր ե ծավալել կուրսերի մեծ ցանց, տնտեսությունները բարձրացնելու, ակտիվը վորակավորելու համար, ամեն մի ակտիվիստ ուժեղ կերպով յուրացնելու յե նոր տեխնիկան, մեքենայացման հարցերը և այլն: Անհրաժեշտ ե կուսակազմակերպության ոգնությամբ մասնագետներին

ներգրավել կոմյերիտմիության կոմիտեների աշխատանքների մեջ:

Մենք շատ ենք խոսել ղեկավարության դիֆերենցիացիայի մասին, սակայն այդ բնագավառում մենք մեծ նվաճումով չենք կարող պարծենալ: Անհրաժեշտ ե խորհրդակցությունների գծով և զբավոր ցուցմունքներով դիֆերենցիացիայի յենթարկել կազմակերպությունները, մասնավորապես հրաժարվելով ընդհանուր հետադոտումներից, վճռականապես անցնել առանձին հարցերի ուսումնասիրության և ինստրուկտափ սխտեմին:

Այժմ հատուկ նշանակություն ե ստանում կենդանի ղեկավարությունը, վորը պետք ե դառնա կոմիտեների աշխատանքի գլխավոր մեթոդներից մեկը: Տեղական կազմակերպություններին ոգնելու համար կազմակերպվող բրիգադների մեջ հարկավոր ե մտցնել վոշ միայն ապարատի աշխատավորներին, այլ և կամավոր ակտիվից ամենապատրաստվածներին: Հաճախ կոմիտեների կողմից աշխատավորների տեղերն ուղարկվելու գործը դժվարանում ե նրանով, վոր մարդ չի լինում, վոր փոխարինի և ղեկավարի այս կամ այն բաժինը և հատվածը: Սա դարձյալ սուր կերպով այսպիսի խնդիր ե դնում. մատակարարում ամեն մի կոմիտեի շուրջը կազմակերպել կամավոր ակտիվ: Կամավոր ակտիվը ոգտագործելու համար, հարկավոր ե ըստեղծել նրանից կարճ ժամանակյա բրիգանդներ առանձին մարտական հարցերի վերաբերյալ, այդ բրիգանդներին սխտեմատիկ կերպով տալով ուրիշ աշխատանք, յեղնելով նպատակահարմարությունից: Կոմիտեների աշխատակիցները աշխատավորների հետ ամուր կապ ունենալուց զատ, պետք ե հաճախ լինեն դրպ-

բողոքներում, խորհրդային հիմնարկութիւններում, ան-
միջապես հսկելով նրանց:

ՀԼԿՅԵՄ 9-րդ համագումարը բացառիկ ուժով և
իր ամբողջ հասակով դրեց մեր ամբողջ աշխատանքի
հսկողութեան կազմակերպման խնդիրը: Անհրաժեշտ և
այժմ ամենուրեք ստեղծել մշտապես գործող հանձնա-
ժողովներ, վորոնց խնդիրն է լինելու՝ ստուգել տեմպե-
րը և այս կամ այն վորոշումների կատարման վորակը:
Այս աշխատանքի համար հարկավոր է առաջ քաշել
ամենապատրաստված յեռանդուն և աշխույժ մարդ-
կանց: Առանձնապէս կարեւոր նշանակութիւն է ստա-
նում կոմյերիտմիութեան ուլթերի հմուտ դասավորու-
մը: Այս աշխատանքի կատարումը հարկավոր է հան-
ձնարարել նույնպէս պատրաստված աշխատավորների:

Վ. ՅԵՐԿՈՒ ՖՐՈՆՏՈՎ ՄՂՎՈՂ ԱՆՀԱՅՏ ՊԱՅ- ՔԱՐԸ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱՎԱԿԱՆՆ Ե.

9-րդ համագումարի ըոպեյին ՀԼԿՅԵՄ-ի ունեցած
հաջողութիւնները ձեռք եյին բերվել ամենից առաջ
և գլխավորապէս շնորհիւ այն բանի, վոր կոմյերիտ-
միութիւնը աշխատում էր կուսակցութեան ղեկավա-
րութեամբ, շնորհիւ այն բանի, վոր նա իր ամբողջ
աշխատանքի մեջ անցերկացնում պարզ լինիւյան գիծ
և վճռական պայքար էր մղում յերկու ֆրոնտով:
Այդ ժամանակամիջոցում մեր միութիւնը կուսակցու-
թեան հետ միասին վճռականապէս պայքարում էր աջ
ֆեբման, իբրև գլխավոր վտանգի, «ձախ» ոպորտու-
նիստների, հաշտողական և աջ—«ձախ» յերկեւեասանի
բոկի դեմ: Կոմյերիտմիութիւնը պայքարում էր նաև

իր շարքերում ոպորտունիզմի սպեցիֆիկ արտահայ-
տութեան դեմ:

Վոչ այլ վոք, յերթե վոչ աշերն եյին, վոր ճշգ-
նում եյին չհրահել դասակարգային խտրութիւնը
յերիտասարդութեան մեջ: Այստեղից էլ առաջ էր յե-
կել յերիտասարդ կուսակներին կոմյերիտմիութեան
մեջ վերադաստիարակելու թերիան: Փորձեր յեղան
արծարծելու կոմյերիտմիութեան մեջ յերիտասարդու-
թեան բոլոր խավերին ընդունելու զաղափարը, առանց
բացառութեան, նրանց թվում նաև կուսակ յերիտա-
սարդներին: Միութիւնը ՀԼԿՅԵՄ կենտկոմի ղեկավա-
րութեամբ ամենավճռական և սոսկալի դիմադրութիւն
ցույց տվեց այդ բոլոր «թերիաներին»:

Միութեան մեջ կային մարդիկ, Բուտիրկինի և
Մինասների նման, վորոնք պնդում եյին, թե միութ-
թիւնը իբր ճգնաժամ է ապրում: Այդ մասին համա-
գումարից առաջ «Կոմսոմոլսկայա Պրավդա»-ում բա-
վական գրվեց: Հարց է ծագում. Կոմյերիտմիութեան
մեջ զարգացման ներկա շրջանում հնարավոր է արդ-
յոք ճգնաժամը: Իհարկե՝ վոչ, Կոմյերիտմիութեան
դրութիւնը մենք չենք կարող գնահատել, առանց սո-
ցիալ-տնտեսական տեղաշարժերի կապակցութեան: Ծի-
ծաղելի և ամբողջովին ոպորտունիստական է կոմյե-
րիտմիութեան ճգնաժամի արձանագրումը այն ըոպե-
յին, յերբ յերկիրը թեվակոխել և սոցիալիզմի ժամա-
նակաշրջանը: Բայց այդ չի նշանակում, վոր մենք
մեր աշխատանքում պետք է հենվինք ինքնահոսի
վրա: Ընդհակառակը, մենք պետք է վճռականապէս
պայքարենք ինքնահոսի դեմ:

Այդ նույն ժամանակամիջոցում կոմյերիտմիութեան
մեջ տեղի յեն ունեցել մի շարք «ձախ» արտա-

հայտնություններ: Մի ժամանակ «Կոմսոմոլայա Պրավդան» գլխավորված եր Կոստրոմի և մի խումբ ավարդեանց կողմից, վորոնք անց եյին կացնում «ձախ» գիծը: Պատահական չե, վոր այն ժամանակ կուսակցութեան Կենտկոմի Գաղափարները նշեց նրանց հաշտվողական ձգտումները դեպի տրոցկիզմը: Կոստրոմը և մյուսները այսպես եյին դատում. «Քանի վոր կուսակցութեանը կրակը աջ կողմն ուղղեց, դա նշանակում է, վոր նա ընդունել է տրոցկիստական պլատֆորմը»: Կոստրոմը և մի շարք ուրիշ ընկերներ տատանվում եյին Տրոցկու Կենտկոմի կազմից հանելու հարցում, կասկածում եյին Տրոցկու արտաքսումը կանոնավոր համարելու վրա: Նրանցից մի քանիսը պնդում եյին, վոր մեր յերկրում սոցիալիզմի կառուցման գաղափարը սոսկ «ագիտացիոն լոզունգ է»: Ինքնին հասկանալի չե, վոր մեր կուսակցութեանը միշտ հենց նրանով է տարբերվել մյուսներից, վոր նա առաջ է քաշել այնպիսի լոզունգներ, վորոնց հարկավոր է անցկացնել կյանքում: Մեր կուսակցութեան լոզունգները միշտ գործոն են, վորոնց թվում նաեւ յերկրում սոցիալիզմ կառուցելու լոզունգը:

«Ձախ» յիւլյթներ յեղան նաեւ այն մասին, թե հարկավոր է սահմանափակել աճը բանվոր յերիտասարդութեան հաշվին, յիւլյթներ յեղան այն մասին, թե յեթե վոչ բոլորովին, գոնե դեթ լիովին դադարեցնել աճը միջակ յերիտասարդութեան հաշվին: Առաջարկութեաններ յեղան կոմյերիտմիութեանը կուսակցութեանից կազմակերպչորեն անջատելու մասին: Սա վոչ ալ ինչ է, յեթե ոչ 96-րդ պրոբի տրոցկիզմ, վորը ժամանակին ամենավճռական դիմադրութեան եր ստացել կոմյերիտմիութեանից:

